



Co-funded by the
Tempus Programme
of the European Union



ԵՄ ՏԵՄՊՈՒՄ ծրագրի աջակցությամբ

Ուսանողների մասնակցության ուղեցույց

Համալսարան-աշխատաշուկա ազգային ցանց



ԱՐԱՐԱՏ

«Համալսարան-գործատու»
հայկական համակարգող գործակալություն

www.ararattempus.org

Այս ծրագիրը ֆինանսավորվել է Եվրոպական Հանձնաժողովի աջակցությամբ: Սույն հրատարակությունը արտացոլում է միայն հեղինակների տեսակետները, և Հանձնաժողովը պատասխանատվություն չի կրում դրանում պարունակվող տեղեկատվության օգտագործման համար:

«Համալսարան-գործատու» հայկական համակարգող գործակալություն



**Ուսանողների մասնակցության
ուղեցույց**

Համալսարան-աշխատաշուկա ազգային ցանց



Co-funded by the
Tempus Programme
of the European Union

Այս ծրագիրը ֆինանսավորվել է Եվրոպական
Հանձնաժողովի աջակցությամբ: Սույն հրատարակությունը
արտացոլում է միայն հեղինակների տեսակետները, և Հանձնաժողովը
պատասխանատվություն չի կրում դրանում պարունակվող
տեղեկատվության օգտագործման համար:



Բովանդակություն

| | |
|---|----|
| Ներածություն | 4 |
| 1. Ինչու է կարևոր ուսանողների համար մասնակցությունը..... | 7 |
| 2. Համալսարան-աշխատաշուկաերկխոսությունում ՀԱՀՄ և ՀԱԱՑ դերը | 10 |
| 3. Ո՞րոնք են շահակիցների օգուտներն այս գործընթացներից | 19 |
| Եզրակացություն | 23 |

Ներածություն

Կրթությունը հաճախ դիտվում է՝ որպես աղքատության դեմ պայքարի վճռորոշ նշանակություն ունեցող քաղաքականության գործիք, քանի որ այն կարող է օգնել անհատներին ձեռք բերելու ավելի լավ աշխատանք, բարձրացնելու տնօրինվող եկամուտները և նպաստելու իրենց կենսապայմանների բարելավմանը: Եվ ձեռք շնորհվող դրակավորումներն առկա աշխատատեղերի համար աշխատանքային պայքարում հիմնական ակտիվներն են:

Ներկա օրերում բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելը ակամա, մեքենայաբար կատարվող քայլ է, քանի որ ուսանողները վստահ չեն, որ համալսարանական կրթություն ձեռքբերելը կապահովի վերջիններիս լիարժեք մասնագիտական առաջխաղացմամբ: Ավարտելուց հետո շրջանավարտներն իրենց զգում են ոչ ամբողջապես պատրաստ իրենց մասնագիտությամբ աշխատանք կատարելու համար:

Այսօր առանց համալսարանների և գործարար աշխարհի միջև կապերի աշխարհն անըմբռնելի է, գործարար աշխարհի հետ համագործակցության մասին քննարկումները դիտվում են ոչ թե համալսարան-գործատու կապի անհրաժեշտության տեսանկյունից, այլ այն համատեքստում, թե ինչպես լավագույն ձևով համագործակցել, որ դա բոլոր շահակիցների համար լինի օգտակար: Անընդունելի է, որ ուսանողները պատրաստ են «տեսականորեն», որը գործնականում նշանակում է առանց աշխարհի մասին հստակ պատկերացման և աշխատաշուկա մտնելու պատրաստվածության, հետազոտողների պարագայում՝ առանց իրենց ուսումնասիրության գործնական կիրառման, հետևապես արդյունքում գործարար աշխարհն էլ չի ստանում ոչ՝ նոր և նորարական արտադրանք ու գործընթացներ, ոչ՝ համարժեքորեն կրթված և հմտացած մարդկային ռեսուրսներ:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնագնա-

հատականն ու կարևորությունը բարձր կմնա միայն այն դեպքում, երբ վերջիններս հաջողեն ընդունելու ժամանակակից փոփոխվող հասարակարգի կողմից ներկայացվող մարտահրավերները: Սա չի կարող հաջողությամբ իրագործվել՝ օգտագործելով հին մոտեցումներ, ռազմավարություններ և կառուցվածքներ: Ներկայումս մենք պետք է հաշվի առնենք գլոբալացումը, տեխնոլոգիական զարգացումներն, ինչպես նաև շրջական միջավայրի գործոններն ու սպառողական կողմնորոշումը:

Անհրաժեշտ է նշել, որ կրթական հատվածի և աշխատաշուկայի միջև երկխոսությունը բարելավման կարիք ունի: Գործատուների և բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև համագործակցությունը նպաստում է գիտելիքի փոխանցմանն ու հաղորդմանը, օգնում է ստեղծելու գործընկերային երկարաժամկետ հարաբերություններ և հնարավորություններ ուղղորդելու նորարարությունները: Աշխատաշուկայի հետ սերտ համագործակցությունը համալսարաններին օգնում է այնպիսի կրթական ծրագրեր մշակել, որոնք համապատասխանում են և բավարարում անհատների ու հասարակության կարիքներին, շրջանավարտներին՝ «սպառազինում» են աշխատաշուկայի համար անհրաժեշտ հմտություններով և մտածելակերպով:

Աշխատանքին միտված կրթական ծրագրերը ողջ աշխարհում կիրառվում են զարգացնելու այնպիսի հմտություններ, գիտելիք, վարվելակերպ և գիտակցություն, որոնք ուսանողներին անհրաժեշտ են իրենց մասնագիտական ապագա զբաղվածության ու գործունեության համար: Աշխատանքին միտված կրթությունը երեք հիմնական մասնակիցների միջև համագործակցությունն է՝ ուսանողների, գործատուների և համալսարանների: Այն իր արտահայտությունն է գտնում որպես ուսանողների համար նշանակալի առավելություն:

Բարձրագույն ուսումնական հաստատություններ-գործատուներ երկխոսությանը վերաբերող հիմնական խնդիրն այն է, թե ինչ

նախաձեռնություններ և քաղաքականության ինչպիսի գործիքներ են կիրառվում շրջանավարտների պահանջարկն ու առաջարկը բարելավելու և որպես հետևանք աշխատաշուկայի համապատասխանությունը կրթական ծրագրերին ապահովելու համար:

Մասնավորապես, մի շարք այլ հարցեր ևս առաջանում են: Օրինակ, ինչպես է ձեռք բերվում հավասարակշռությունը առաջարկի և պահանջարկի միջև և ինչ միջոցներ են կիրառվում անհամապատասխանության դեպքում: Ինչպիսին է տեղեկատվական համակարգերի հետ աշխատանքի փորձը շրջանավարտների՝ աշխատանքի ընդունման վերաբերյալ: Արդյո՞ք շրջանավարտների՝ աշխատանքի ընդունման վերաբերյալ տեղեկատվությունը նաև հավաքվում է ավելի երկար ժամանակահատվածի համար վերահսկելու շրջանավարտների մասնագիտական առաջխաղացումը: Ինչ է հայտնի հետևանքների ու արդյունքների մասին:

Անհնար է պատասխանել վերոնշյալ բոլոր հարցերին: Եվ ներկայումս հայաստանյան կրթական համակարգի զարգացումը խոչընդոտող գործոններից մեկը աշխատաշուկայի և մասնագիտական կրթության միջև թույլ կապերն են: Բարձրագույն կրթության և արդյունաբերության միջև մեկուսացման և տարանջատման խնդրի լուծման, աշխատաշուկայի և համալսարանների խզումը հաղթահարելու համար «Արարատ» («Համալսարան-գործատու» հայկական համակարգող գործակալություն, №-530321-TEMPUS-1-2012-1-AM-TEMPUS-SMHES) ծրագիրը կմիավորի այս երկու հատվածները ապահովելու բարձրագույն կրթության համապատասխանությունն աշխատաշուկայի պահանջներին:

1. Ինչու է կարևոր ուսանողների համար մասնակցությունը

«Պետությունները պետք է ջանքեր գործադրեն սահմանելու և տարբերելու զբաղվածությունն ու աշխատանքի ընդունումը, քանի որ վերոնշյալները երկու տարբեր հայեցակարգեր են ներկայացնում: Աշխատանքի ընդունումը պետք է դիտարկվի որպես կարողություն սովորելու և զբաղվածություն ձեռք բերելու մինչդեռ զբաղվածությունը աշխատանքի փաստացի ձեռքբերումն է: Բարձրագույն կրթական համակարգերը չպետք է մշակվեն աշխատաշուկայի կարիքներին համապատասխանելու համար, այլ հարմարեցվեն և փոփոխության ենթարկվեն հասարակության կարիքներին համապատասխան՝ շրջանավարտների աշխատանքի ընդունման ապահովման խնդրիների քննարկման ժամանակ ուշադրության կենտրոնում պահելով կրթական ծրագրերի և մասնագիտությունների ամբողջականությունն ու բազմազանությունը: Ազգային մակարդակներում մշակված քաղաքականությունները պետք է հստակորեն արտացոլեն այս մոտեցումը և համոզվածությունն այն հարցում, որ բարձրագույն կրթական համակարգերում որոշումների կայացման գործընթացում կկիրառվի այդ մոտեցումը»:¹

Ներկայումս գործատուների առջև ծառայած հիմնական խնդիրներն են՝

- անփորձ աշխատողին սովորեցնելու, պատրաստելու և սխալներն ուղղելու բարձր ծախսերը,
- բավական բարդ է հարցազրույցից հասկանալ, թե որ թեկնածուն է իրականում ավելի լավ աշխատող (կատարված աշխատանքի և ինքնամարկետինգի միջև եղած բացը),
- փորձառու աշխատողին կորցնելու ռիսկը,
- բարձր աշխատավարձեր վճարելու ֆինանսական անբավարար միջոցները,

¹ <http://bologna-yerevan2015.ehea.info/files/ESU%20Bologna%20With%20Student%20Eyes%202015-Executive%20Summary.pdf>

- ինքնավարությունն աշխատավայրում (դայմկ, թե՛ վերահսկող),
- զգացմունքային ինտելեկտի պակասը,
- պահանջվող կոմպետենցիաները վեր հանելու ճախողումը, տեղական շուկայի անկարողությունը կրթական գործընթացում գործելու որպես ակտիվ շահակից:

Մեկ այլ խնդիրը ուսանողների շրջանում իրազեկվածության բաժրացումն է մասնագիտական առաջխաղացման հնարավոր ուղիների և զբաղվածության համար անհրաժեշտ հմտությունների մասին: Վերջինիս հետ միասին թե՛ տնտեսական, թե՛ հասարակական տարանջատումը դեպի աշխատաշուկան բարձրագույն կրթության կողմնորոշումը դարձնում են բավականին բարդ և ստեղծում են աշխատուժի շարժունության համար լրացուցիչ խոչընդոտներ:

Այս համատեքստում ուսանողների՝ գործատուների և բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև համագործակցությանը մասնակցության շարժառիթներն են՝

- համալսարանում կատարվող կրթական շարունակական բարեփոխումներին մասնակցություն,,
- կրթական գործընթացներում ուսանողների դերի կարևորության ընդգծում,
- կրթական ծրագրերի փոփոխում, այդ թվում նաև ուսանողների պահանջներին համապատասխան,
- աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացում,
- ուսանողներին և շրջանավարտներին իրենց մասնագիտական հմտությունների զարգացման գործում օգնություն,
- ուսանողներին և շրջանավարտներին իրենց մասնագիտական գիտելիքն արժևորելու գործընթացում օգնություն,
- իրենց կրթությանը համապատասխան ոլորտում աշխատանք գտնելու գործընթացի մենթորություն:

Ուսանողները ընդգրկված են լինելու հետևյալ գործողություններում՝

- կրթական վերջնարդյունքների մշակման աշխատաժողովներ,
- կրթական վերջնարդյունքների մասին կլոր սեղան քննարկումներ,
- համապատասխան կրթական ծրագրերի ուսումնասիրություն ուսանողների կողմից,
- ներկայացվող առաջարկների հետ փորձառության արդյունավետության գնահատում,
- ուսանողների ֆոկուս խմբերով քննարկումներ կրթական ծրագրերի արդյունավետության մասին,
- ուսանողներ-գործատուներ համագործակցության հաստատում և ամրապնդում
- համագործակցություն երիտասարդական և ուսանողական կազմակերպությունների ու ձեռնարկատերերի հետ:

2. Համալսարան-աշխատաշուկա երկխոսությունում ՀԱՀՄ և ՀԱԱՑ դերը

Համալսարան-աշխատաշուկա ազգային ցանցը (ՀԱԱՑ), ուսանողական կարիերայի կենտրոնները և շրջանավարտների միությունները օժանդակելու են համալսարանների և գործատուների միջև համագործակցությանը՝ ապահովելով ակտիվ երկխոսություն համալսարանների և գործատուների միջև բացահայտելու համար աշխատաշուկայի կարիքները, հաղորդելու համալսարաններին այդ կարիքները, զարգացնելու ծրագրային մակարդակում հիմնական կրթական վերջնարդյունքները, վերջիններս պահելու ժամանակակից և ընդունելի իրական կյանքում, և այսպիսով, որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) գործառնությունն ապահովելու նպատակով:

Վերջնարդյունքների սկզբունքը ենթադրում է՝

- ՀԱԱՑ և համալսարանական կենտրոնների գործառնությունը համալսարանների և տարածաշրջանային գործատուների միջև համագործակցությունը խթանելու համար
- Տեղեկատվական բազայի և համապատասխան գործիքների մշակումը ՀԱԱՑ-ը գործարկելու և շնորհվող որակավորումների ու համալսարանների կարիքների մասին համալսարանների և աշխատաշուկայի միջև ակտիվ երկխոսություն ձևավորելու համար
- Համալսարանի այն անձնակազմի կարողությունների զարգացումը, ովքեր ու նակ են ապահովելու ակտիվ համագործակցություն և պահպանելու համալսարանների ու գործատուների միջև վստահելի և կայուն կապեր
- Ինքնավավերացված որակավորումների ոլորտային շրջանակները և վերանայված վերջնարդյունքները ճարտարապետության/տեղեկատվական տեխնոլոգիաների, մենեջմենթի, կրթության/մանկավարժության ոլորտների համար:

Այսպիսով, ՀԱԱՑ-ի հիմնումը, միավորելով համալսարան-աշխատաշուկա համագործակցության միավորները(ՀԱՀՄ), կապահովի բարձրագույն ուսումնական հաստատությունների և տարածաշրջանային գործատուների կապը բարձրագույն կրթությունը վերափոխելու ջանքերն իրագործելու գործընթացում ավելի լավ ծառայեցնելու վերջինիս հետազոտական, կրթական պլանավորման և գնահատման նպատակներին: Ցանցն ապահովելու է երկու կողմերի միջև կապերը ձևավորելով ակտիվ երկխոսություն շահակիցների միջև, բացահայտելով աշխատաշուկայի կարիքները և փոխանցելով վերջիններս բարձրագույն կրթության հասված: Իրենց հերթին, համալսարանները ստեղծելու են կամ վերագործարկելու կարիերայի կենտրոններ և շրջանավարտների միություններ: Այս ռազմավարական կարևորը միավորները տեղեկատվական բազաներ են ձևավորելու և պահպանելու, որն ապահովելու է շրջանավարտների կողմից հետադարձ կապի մշտական ստացում ձեռքբերված կրթության կիրառելիության, հետագա զարգացման միտումների, հետավարտական զբաղվածության տվյալների, կարիերայի առաջխաղացման և շրջանավարտների անհատական կարիերայի վերաբերյալ:

ՀԱՀՄ պատասխանատու են պրոֆեսորադասախոսական անձնակազմի և գործատուների, ուսանողների և շրջանավարտների ջանքերը միավորելու գործում կրթական վերջնարդյունքների ձևավորման և շարունական վերանայման համար երկրի տնտեսական զարգացման ապահովման համար: ՀԱԱՑ նպաստում է ՀԱՀՄ գործողությունների կատարմանը, խթանում տարբեր շահակիցների միջև փոխգործակցությունը, մասնագիտական կրթության և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանության ապահովման համար: Հետևապես, ուսանողները կլինեն զբաղվածության վերաբերյալ աշխատաշուկայի պահանջների մասին անհրաժեշտ հմտություններով և գիտելիքով զինված և ունակ բավարարելու այդ պահանջները:

ՀԱԱՅ ստեղծաման հիմնական նպատակը Հայաստանում բարձրագույն կրթությունը ժամանակակից դարձնելն է՝ ապահովելով վերջինիս համապատասխանությունը աշխատաշուկայի շարունակաբար փոփոխվող պահանջներին:

ՀԱԱՅ-ն հանդիսանում է տվյալների հավաքագրման, ներդրման, մշակման և պահպանման համակարգ: Այս համակարգը ապահովում է ուսումնական հաստատություններից և աշխատաշուկայից տեղեկատվության ստացումը և ստացված տվյալների խմբավորումը՝ դյուրացնելով տվյալների վերլուծությունը:


ՀԱԱՅ-ը տեղակայված է մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամում (այսուհետ՝ ՈԱԱԿ) և դրա աշխատանքները համակարգվում են ՈԱԱԿ-ի համապատասխան մասնագետների՝ Ծրագրի համակարգման խմբի կողմից:

ՀԱԱՅ-ի գործունեությունը ապահովում են հետևյալ միավորները՝

- ա) Ոլորտային հանձնաժողովները,
- բ) Ծրագրի համակարգման խումբը,
- գ) Հետազոտական խմբերը,
- դ) Համալսարան-աշխատաշուկա համագործակցության միավորները:

ՀԱԱՅ-ի կառավարման և գործարկման գծապատկերները ստորև:

Գծապատկեր 1



Ոլորտային հանձնաժողովները ձևավորվում են տվյալ ոլորտի մասնագետներից (փորձագետներից) և պետական կառավարման մարմինների ու մասնավոր հատվածի ներկայացուցիչներից՝ գործատուներից: Ոլորտային հանձնաժողովները սահմանում են հետազոտությունների ոլորտները, առաջնահերթությունները և քննարկում ու հաստատում Հետազոտական խմբերի կողմից կատարված հետազոտությունների արդյունքները: Կազմված լինելով տվյալ ոլորտի առաջավոր, ոլորտին և ոլորտում աշխատող մասնագետներին քաջատեղյակ անդամներից՝ Ոլորտային հանձնաժողովները կձևավորեն և պարբերաբար կթարմացնեն ոլորտի փորձագետների բազան:

Ոլորտային հանձնաժողովների գործառույթներն են.

- Ոլորտի հետազոտությունների ռազմավարական ուղղությունների և ժամանակացույցի մշակում:
- Ծրագրի համակարգման խմբի հետ համատեղ հետազոտու-

թյան շրջանակի սահմանում՝ ներառյալ գործողությունների պլանի մշակումը:

- Հետազոտությունների իրականացման համար Հետազոտական խմբերի ձևավորում:
- Ծրագրի համակարգման խմբի հետ համատեղ Հետազոտական խմբերի աշխատանքների համակարգում:
- Կատարված հետազոտությունների արդյունքների վերլուծություն:
- Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը (այսուհետ՝ ՀՀ ԿԳՆ) հավատարմագրման չափանիշներում և ՈԱՇ-ում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում՝ ելնելով հետազոտությունների արդյունքներից:
- Ոլորտի հետազոտությունների իրականացման գործընթացի կառավարում և որակի վերահսկում սահմանված քաղաքականությանը և գործառույթներին համապատասխանությունն ապահովելու համար:
- Հետազոտությունների արդյունքների ամփոփում և ներկայացում Հավատարմագրման հանձնաժողովի հաստատմանը՝ հաշվի առնելով Ծրագրի համակարգման խմբի կարծիքը:
- Ոլորտի փորձագետների բազայի ձևավորում և պարբերաբար թարմացում՝ բազայում ներառելով փորձագետների վերաբերյալ անհրաժեշտ բոլոր տվյալները:
- ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված հավատարմագրման գործընթացները համակարգողների հարցմանն ի պատասխան փորձագետների բազայից փորձագիտական խմբի անդամների թեկնածությունների տրամադրում:
- Ըստ ոլորտների հավատարմագրման փորձագիտական խմբերի կողմից պատրաստված զեկույցների վերլուծության իրականացում:

➤ Ոլորտում այլ հետազոտությունների իրականացման համար ժամանակավոր աշխատանքային խմբերի ձևավորում:

Ծրագրի համակարգման խումբը համակարգում է Ոլորտային հանձնաժողովի և Հետազոտական խմբերի գործունեությունը՝ մշակելով գործողությունների տարեկան պլաններ և համաձայնեցնելով դրանք ներգրավված մյուս միավորների հետ, ինչպես նաև իրականացնում Համալսարան-աշխատաշուկա կապի ապահովման ներհամալսարանական միավորների կողմից տվյալների մուտքագրման գործընթացի մշտադիտարկում և խնդիրների դեպքում դրանք ներկայացնում է պատասխանատուներին:

Ծրագրի համակարգման խմբի անդամները պետք է.

- 1) մշակեն Ոլորտային հանձնաժողովների գործողությունների տարեկան պլանի նախագծերը և Ոլորտային հանձնաժողովների նախագահների հետ համաձայնեցնելուց հետո ներկայացնեն ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովի հաստատմանը,
- 2) մշակեն ՀԱԱՑ-ի գործողությունների տարեկան պլանի նախագիծը և Ոլորտային հանձնաժողովների նախագահների հետ համաձայնեցնելուց հետո ներկայացնեն Հավատարմագրման հանձնաժողովի հաստատմանը,
- 3) իրականացնեն Ոլորտային հանձնաժողովների և ՀԱԱՑ-ի տարեկան պլանների կատարման մշտադիտարկում և համապատասխան գործընթացի պատասխանատուի հետ,
- 4) համակարգեն Հետազոտական խմբերի աշխատանքները Ոլորտային հանձնաժողովների հետ համատեղ,
- 5) համակարգեն ՀԱԱՑ-ի տեխնիկական սպասարկման և հարցաշարերի մշակման խմբի (անձնակազմի) աշխատանքները,
- 6) մշակեն և ապահովեն ՀԱԱՑ-ի տեխնիկական սպասարկման և հարցաշարերի մշակման խմբի (անձնակազմի) և Համալսարան-աշխատաշուկա կապի ապահովման ներհամալսարանական

միավորների արդյունավետ համագործակցության մեխանիզմները,

- 7) ապահովեն Ոլորտային հանձնաժողովների, Հետազոտական խմբերի և Համալսարան-աշխատաշուկա կապի ապահովման ներհամալսարանական միավորների արդյունավետ համագործակցությունը:

Հետազոտական խմբերը ձևավորվում են Ոլորտային հանձնաժողովների կողմից և միտված են տվյալ ոլորտի կամ դրա մեջ մտնող ուղղությունների կոնկրետ խնդիրների հետազոտության իրականացմանը: Այս խմբերը ձևավորվում են միայն հետազոտության նպատակների և շահակիցների հստակ սահմանումից հետո: Այս մոտեցումը թույլ է տալիս ներգրավել հետազոտության նպատակներին համապատասխան մասնագետներ:

ՀԱԱՑ-ի հետ համագործակցող յուրաքանչյուր Համալսարան ունենում է համալսարան-աշխատաշուկա համագործակցության միավոր: Համալսարան-աշխատաշուկա համագործակցության միավորներն ապահովում են համապատասխան ոլորտի գործատուների և այլ հիմնական շահակիցների (պրոֆեսորադասախոսական անձնակազմ, շրջանավարտներ, ուսանողներ և այլն) դուրսբերումը, ցուցակագրումը, նրանց հետ կապի հաստատումը և պահպանումը, ինչպես նաև նրանց կողմից ՀԱԱՑ-ի էլեկտրոնային հարցաշարի լրացումը:

ՀԱԱՑ-ի գործունեությունը ապահովող միավորները իրենց իրավասությունների տեսանկյունից փոխկապակցված են և հանդես են գալիս որպես մեկ ընդհանուր միավոր՝ ՀԱԱՑ: Դրանց փոխհամաձայնեցված գործունեությունը ապահովվում է Ծրագրի համակարգման խմբի միջոցով: Արդյուքում՝ ոլորտային հանձնաժողովները ստանձնում են հետազոտական հիմնական ուղղությունների սահմանման և հետազայում դրանց արդյունքների հաստատման պատասխանատվությունը: Համալսարան-աշխատաշուկա համագործակցության

միավորները, հետազոտական և համակարգման խմբերը պատասխանատվություն են կրում հետազոտությունների իրականացման համար:

Միավորն իրականացնում է հետևյալ հիմնական գործառույթները՝

- 1) ԲՈՒՀ-գործատու կապի զարգացման ապահովում և այդ ուղղությամբ ՈԱԱԿ-ին աջակցության տրամադրում:
- 2) Գործատու կազմակերպությունների մասնագիտական կարիքների բացահայտում և վերլուծում, հանդիպումների կազմակերպում գործատուների, ուսանողների, դասախոսների և համալսարանի ղեկավար մարմինների հետ: Վերջնական արդյունքների և տվյալների տրամադրում ՈԱԱԿ-ին:
- 3) Հետադարձ կապի ապահովում համալսարան-ուսանող-գործատու-ՈԱԱԿ ձևաչափով:
- 4) Այլ գործառույթների իրականացում, որոնք կնպաստեն մասնագիտական շուկայի կարիքների բավարարմանը, համալսարան-աշխատաշուկա կապի ամպրապնդմանը և ՈԱԱԿ-ի հետ հարաբերությունների զարգացմանն ու խորացմանը:
- 5) Հետազոտությանը նպաստող նախնական տվյալների հավաքագրում ըստ անհրաժեշտության և տրամադրում պահանջվող ձևաչափերով:
- 6) Պարզաբանող աշխատանքների իրականացում շահակիցների հետ հաղորդակցական վստահության և շահագրգռվածության միջավայրի ձևավորման նպատակով:

ՀԱՀՄ ռազմավարությունը կարող է սահմանվել որպես համալսարան-գործատու գործընկերության բովանդակության փոփոխում և վերջիններիս միջև կայուն հարաբերությունների հաստատում տարբեր միջոցների մշակմամբ և ընդլայնմամբ, որոնցում նրանք կարող են համագործակցել:

ՀԱՀՄ գործողությունների հիմնական նպատակներն են՝

- Աշխատանքային շուկայում մրցունակ կրթական ծրագրերի ներկայացում
- Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթական ծրագրերի շարունակական վերանայում
- Կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման մեթոդաբանության մշակում (գործիքներ, համագործակցության ձևաչափեր, հետադարձ կապ և այլն)
- ՀԱՀՄ կարողությունների ամրապնդում՝ ներառելով շահակիցների բոլոր խմբերին՝ ուսանողներ, շրջանավարտներ, գործատուներ, պրոֆեսորադասախոսական անձնակազմ
- Հայկական աշխատաշուկայի հետազոտություն և կարիքների գնահատում, զարգացման մշտադիտարկում
- Շրջանավարտների զբաղվածության դինամիկայի վիճակագրական վերլուծություն:

3. Ո՞րոնք են շահակիցների օգուտներն այս գործընթացներից

Համալսարան-աշխատաշուկա համագործակցությունն ունի տեսանելի արդյունքներ: Ուսանողները բարելավում են իրենց կրթական փորձառությունն ու ապագա աշխատանքի հմտություններն են զարգացնում, ընկերությունները բարձրացնում են իրենց բիզնեսի արդյունավետությունը, հասարակությունը կարող է շահել զբաղվածության և տնօրինվող եկամտի աճի, տեղական մրցունակ արդյունաբերության զարգացման արդյունքում, համալսարանը կարող է իր առաքելությանը հասնել մինչ ակոֆեսորադասախոսական անձնակազմը բարձրացնում է իր հեղինակությունը, ընդլայնում հետազոտությունների շրջանակները և նպաստում համալսարանի դրական կերպարի ձևավորմանը: Տարբեր շահակիցներ տարբեր շահեր են հետապնդում՝ նպաստելով վերոնշյալ համագործակցության զարգացմանը: Ուսանողների համար հիմնական շարժառիթը կապված է տնտեսական ապագա բարեկեցության ապահովման հետ: Կրթական գործընթացին մասնակցությունը, որը հիմնված է համալսարան-գործատու համագործակցության վրա, ենթադրում է որակյալ կրթության տրամադրում, աշխատանքի ընդունման հնարավորությունների ընդլայնում կամ ապագա բիզնես գործարարության համար կայուն հիմքերի ապահովում:

➤ Ուսանողները՝ որպես հիմնական շահակիցներ

Նախ մենք դիտարկում ենք ուսանողների դերը՝ որպես բարձրագույն կրթության հիմնական շահակիցների:

Ուսանողների օգուտները՝ որպես հիմնական շահակիցներ.

- աշխատաշուկայի պահանջների մասին գիտելիքներ՝ համալսարան ընդունվելուց առաջ հնարավորություն ընտրելու աշխատաշուկային համապատասխան մասնագիտություն,
- բարեփոխված կրթական ծրագրեր՝ յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված հստակ վերջնարդյունքներ,
- աշխատաշուկայի կարիքներին համարժեք կրթություն՝ հնա-

- րավորություն ստանալու գործատուին բավարարող կրթություն,
- աշխատանքի ընդունման հնարավորությունների ընդլայնում՝ աշխատանք գտնելու ավելի մեծ հավանականություն,
- շարժունության ընդլայնում՝ հնարավորություն համալսարանն ավարտելուց հետո մասնագիտական հմտությունների և գիտելիքի առավել արդյունավետ օգտագործման:
- Ուսանողները՝ որպես ակադեմիական հասարակության անդամներ

Այս մոտեցումը ենթադրում է ուսանողներին դիտարկել որպես կրթական գործընթացի մասնակիցների, այլ ոչ թե վերջնական արտադրանքի գնորդների կամ սպառողների: Որպես ակադեմիական հասարակության անդամներ՝ ուսանողները ևս պատասխանատվություն են կրում կրթության և այն համալսարանի համար, որն առաջարկում է այդ կրթությունը: Եթե կրթությունը չի բավարարում ներկայացվող պահանջներին, ապա պատասխան արձագանքը պետք է լինի համալսարանի և մատուցած կրթական ծառայությունների բարելավումը և ոչ թե այլ համալսարան գնալը:

Ուսանողները պետք է հստակ պատկերացումներ և սպասելիքներ ունենան բարձրագույն ուսումնական հաստատություններից. սպասելիքներ և ակնկալիքներ, որոնք ոչ միշտ են արդարացվում: Բայց չէ՞ որ իրենք ևս այդ հաստատության մի մասն են կազմում:

Սակայն եթե ուսանողները դադարեն իրենց ընդունելուց որպես համալսարանի և ակադեմիական հասարակության մի մասնիկ, ապա համալսարաններն այս դեպքում լուրջ խնդիրների առջև կկանգնեն: Ըստ էության, նրանք պետք է իրենց դիտարկեն որպես այն համայնքի անդամներ, որն արդեն ազգային սահմաններից դուրս է և միջազգային չափողականություն ունի:

- Ուսանողները՝ որպես քաղաքացիներ
- Բարձրագույն կրթության շարունական բարելավման գործընթացում ազդեցություն:

Այլ շահակիցների դեպքում՝

➤ Գործատուների օգուտները՝

- ավելի լայն հնարավորություններ գտնելու պահանջվող մասնագետներ տվյալ աշխատատեղի համար,
- աշխատատեղի պահանջները բավարարող անձնակազմի վերապատրաստման ցածր ծախսերը,
- տվյալ աշխատատեղի համար մասնագետներին աշխատանքի ընդունելու ցածր ծախսերը,
- կրթական հստակ և որոշակի ծրագրերը տվյալ մասնագիտության համար:

➤ Պրոֆեսորադասախոսական անձնակազմի օգուտները՝

- տվյալ ոլորտում դասավանդման հստակ մեթոդների ընտրություն,
- ավելի շատ ուսանողներ ունենալու հնարավորություն,
- աշխատաշուկայից հետադարձ կապի շարունակական ստացում, տեղեկատվության ձեռքբերում աշխատաշուկայի զարգացման միտումների ու պահանջների, հստակ մասնագիտության վերջին նորությունների մասին:

«ԵԲԿՏ-ի հիմնական նպատակն է շրջանավարտներին իրենց աշխատանքային գործունեության ընթացքում ապահովել աշխատանքային և ինքնազբաղվածության ավելի լայն հնարավորություններով և անել դա անընդհատ թարմացվող աշխատանքային պրոֆիլների ստեղծմամբ, որոնք կհամապատասխանեն տեխնոլոգիական զարգացումներով պայմանավորված արագորեն փոփոխվող աշխատաշուկաների պահանջներին: Մենք պետք է վստահ լինենք, որ յուրաքանչյուր ուսումնական ցիկլի վերջում շրջանավարտները կտիրապետեն այն բոլոր հմտություններին, որոնք հնարավորություն կտան նրանց հեշտորեն մուտք գործել աշխատաշուկա և ձեռք բերել նոր հմտություններ, որոնք էական նշանակություն կունենան նրանց

հետագա աշխատանքային գործունեության ընթացքում: Մենք կա-
ջակցենք բարձրագույն կրթական հաստատություններին այս նպա-
տականներին հասնելու համար բացահայտել նոր ու բազմապիսի
ուղիներ, օրինակ ամրապնդելով գործատուների միջև եղած երկխո-
սությունը, իրականացնելով ծրագրեր, որոնք կապահովեն տեսական
և գործնական բաղադրիչների հավասարակշռությունը, և հետևելով
շրջանավարտների կարիերայի զարգացումներին: Մենք կկիրառենք
ուսուցման և կացության համար միջազգային շարժունությունը՝ որ-
պես ուսանողների հմտությունները և աշխատանքային հնարավո-
րությունները ընդլայնելու ազդեցիկ միջոց»:¹

¹ http://www.ehea.info/Uploads/SubmittedFiles/5_2015/112705.pdf

Եզրակացություն

Որակական փոփոխությունների տեսանկյունից զարգացման ամենակարևոր միտումներից մեկը արդյունաբերականից հետարդյունաբերական անցումը կամ տեղեկատվական հասարակության զարգացման փուլ թևակոխելն է, որը բնութագրվում է գործունեության բոլոր ոլորտներում տեղեկատվության և գիտելիքի դերի մեծացմամբ, ինչպես նաև տնտեսական հարաբերություններում տեղեկատվական տեխնոլոգիաների դերի կարևորմամբ: «Տեղեկատվական արտադրանքի» ի հայտ գալու հետ մեկտեղ տեղեկատվությունը և գիտելիքը դարձել են ցանկացած պետության տնտեսական զարգացման առանցքային գործոններ, տեղեկատվական ռեսուրսները կարող են դիտարկվել՝ որպես աշխատանքի միջոցներ, աշխատանքի առարկա կամ աշխատանքի արդյունքներ, ամեն երկրի համար իր նախնական ձևավորումն ուղեկցվում է արտադրության կառուցվածքում փոփոխություններով, ինտենսիվ արտադրություններում գիտելիքի մասնաբաժնի ավելացմամբ, որն էլ իր հերթին պահանջում է կրթական ծառայությունների ոլորտում համապատասխան ու համարժեք փոփոխություններ: Այնուամենայնիվ, ինտեգրացման գործընթացները պայմանավորված են գլոբալ խնդիրների լուծման համար ջանքերը միավորելու և ուղղորդելու անհրաժեշտությամբ, հետևապես նաև ենթադրում են կրթական ազգային համակարգերի ինտեգրացում կրթական համաշխարհային տարածք: Ըստ էության, ազգային կրթական զարգացման խնդիրները գործատուների պահանջներին և հասարակության շահերին համապատասխանեցնելը երկրում որակյալ կրթության ապահովման հիմնաքարն է:

Եվ ինչ է համագործակցությունն այս համատեքստում:

Համագործակցությունը կապեր ստեղծելու և հարաբերություններ հաստատելու գործընթաց է, որն ապահովում է Ձեզ տեղեկատվությամբ, խորհրդատվությամբ և հետագա տվյալներով, որոնք

կբարձրացնեն Ձեր կարողությունները տեղեկացված լինելու կարիերայի մասին որոշումներին, ինչպես նաև փորձառության կամ թափուր աշխատատեղերի մասին:

Այս հարաբերությունները հնարավորություն ունեն լինելու երկկողմանի փոխշահավետ և օգտակար, հատկապես երկարաժամկետում համալսարանների և աշխատաշուկայի միջև հաջող համագործակցություն ձևավորելու համար:

Այսպիսով, գործատուների համար համալսարանների հետ համագործակցության պատճառներն են՝

- ❖ իրենց մրցունակության և արտադրողականության բարձրացում,
- ❖ դեպի արդյունաբերություն համապատասխան ուղիների ապահովում,
- ❖ նոր տաղանդների գրավում,
- ❖ առկա անձնակազմի պահպանում և վերապատրաստում:

Համալսարանների համար գործատուների հետ համագործակցության պատճառներն են՝

- ❖ գործատուներին համապատասխան կրթական ծրագրերի մշակում
- ❖ այլ համալսարաններից իրենց առաջարկի տարբերակում
- ❖ ուսանողների՝ աշխատանքի ընդունման հնարավորությունների ընդլայնում
- ❖ իրենց հեղինակության բարձրացում:

Ամփոփելով, համալսարան-գործատու համագործակցությունը համալսարանի ռազմավարության և զարգացման ամբողջական և առանցքային բաղադրիչներից է:

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ